

Ծանօթ. Ս. Լուսաւորչի Եկեղեցւոյն ծոցը՝ կոտէն յառաջ ուրիշ պատրիարք մ'ալ թաղուած է: Կեսարացի Գրիգոր պատրիարքն է նա. Եդեսացի Սրապիոն կաթողիկոսի (= Գրիգոր ԺԳ.) հռչակաւոր աշակերտը, որ Էրէշ՝ կ. Պոյսի պատրիարք եղաւ, շատ խիտ եւ խստապահանջ եկեղեցական մը՝ խօսքով եւ գործով է. վախճանեցաւ 1635—6ին: Շահին Չէլէպի. ժամանակակից նշանաւոր դէմքերէն, կը յաջողի Մեծ-Եպարքոս Պայրամ Փաշայէն արտօնութիւն առնել եւ կեսարացին կը թաղուի. «առ որմով սոյն եկեղեցւոյս», իլգգ. Մատենադարանի (Ղալաթիա) Չեռագիրներէն մէկուն մէջ (այլ եւ այլ գործերու եւ գրուածներու հաւաքածոյ մը) Գ-իօք Էրէշ ինքնագիր յիշատակարան մը գրած է, ուր կ'ըսէ թէ Պատրիարքը, որ իր Վիճակին՝ Ստամպոլի՝ մէջ կը մեռնի իրեն հօրեղբայր է. թէ Ս. Լուսաւորիչ եկեղեցին թաղելու համար Շահին Չէլէպին խոշոր ծախքեր բրած է, այս ծախքերը գոցելու համար Գրիգոր Պատրիարքին Մատենադարանը վաճառուած է, եւ այլն:

Իբր հետաքրքրական հատուած նոյնութեամբ կը դնենք հոս այդ յիշատակարանը, որ հակառակ իր աղձատ լեզուին, պատմական արժէք մ'ունի.

«Փառք քեզ համապատիւ Էրբորդութիւն եւ մի աստուածութիւն, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն.

Էւ արդ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս ի յարգարոց, անկատարս ի կատարելոց, տգէտս ի գիտնականաց, յետինս ի կարգաւորաց, անբանս իբր զբանականս, եղկելիս եւ ողորմելիս, խեղճս եւ փաստալիս, մտօք յիմարեալս եւ հոգւով ցնորեալս. պարտականս ի բիւրուց քանքարաց եւ յետինս ի սպասաւորաց եկեղեցւոյ, սոսկ անուամբ Գ-իօք Էրէշ կոչեցելոյս, ծոյս ի բարիս եւ օտարս յամենայն տեսակս առաքինութեան. յոգնական եւ անթուելի բազմապատկեալ բիւրաւոր բարեաց, միաժողով բազձաձող (?) եւ պարունականս զայս աստուածունակ եւ գերադրա-

«Ցեառնս ի պատիւ վէմս այս յուղղակի

Ի յորմս հաստատեալ կայ ինքն առաջիկոյ —

կափարիչի պէս շիրմին վրայ մնացած է. եւ վերջին փոփոխութիւններու ատեն միայն հաստատուած է «Ի յորմս», իր արդի ձեւով: Եւ որպէս զի թէ շիրմը եւ թէ տապանագրին մարմարը շատ տեղ չգրաւ են ամփոփուած են կարելի եղածին չափ: